**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Գյուղ Տեղ** **30 հունիսի 2020թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2019 թվականի նոյեմբերի 29-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2020 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» N649-Ա հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2020 թվականի մայիսի 19-ի N124-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ 2020 թվականի հունիսի 23-30-ն ընկած ժամանակահատվածում իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն (այսուհետ՝ հսկողություն) հետևյալ 16 բնագավառներում՝

<u>Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնության և շրջակա միջավայրի պահպանություն, ոստիկանություն:</u>

1. Հիմք ընդունելով վերոնշյալ 16 բնագավառների մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության՝ 2020 թվականի հունիսի 23-29-ն ընկած ժամանակահատվածում կազմված N1, N2, N3, N4, N5. N6, N7, N8, N9, N10, N11, N12, N13, N14, N15, N16 արձանագրությունները, իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, այդ խախտումների վերացման ուղղությամբ արված առաջարկությունների և ժամկետների վերաբերյալ:

2. Խախտումները նշված ժամկետներում չվերացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվեն դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Տեղ համայնքի ղեկավարը իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Տեղ համայնքի ղեկավարին:

**Հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝**

**Ն. Ճաղոյան**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական
հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ 2020 թվականի հունիսի 30-ի
արձանագրության

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

Սույն հավելվածում նշված խախտված դրույթների վերաբերյալ տեղեկատվության հիմքն են հսկողության 16 բնագավառների (տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացում, քաղաքաշինություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, առողջապահություն, կրթություն, սոցիալական պաշտպանություն, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ, տրանսպորտ և կապ, անասնաբուժություն, բուսասանիտարիա, սննդամթերքի անվտանգություն, բնապահպանություն, ոստիկանություն) մասով համապատասխան նախարարությունների կողմից հաստատված հարցաշարերի հիման վրա իրականացված հսկողության N1-N16 արձանագրությունները:

(Հսկողության ժամանակահատվածը՝ 2018 թվականի նոյեմբերի 10-ից մինչև 2020 թվականի հունիսի 29-ը: Այն բնագավառները, որոնցում խախտումներ չեն արձանագրված, ներքոհիշյալ աղյուսակում չեն նշվում:)

| | Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|
| | 1 | 2,3,4 | 5 | 6 |
| **Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացում** | | | | |
| ԳԼՈՒԽ 1<br>ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ | | | | |
| 2) | ավագանու հանձնաժողովների քանակը, գործառույթները և ձևավորման կարգը. | Թերի է Պահպանված | Համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 9-ի N 21-Ա որոշմամբ ստեղծվել են ավագանու 3 մշտական հանձնաժողովներ, սակայն հանձնաժողովների նիստերի անցկացման մասին արձանագրություններ չկան, որից կարելի է ենթադրել, որ հանձնաժողովների նիստեր տեղի չեն ունենում: | Առաջարկվում է սույն իրավական և մասնագիտական հսկողության արդյունքները, ինչպես նաև սույն դրույթը քննարկել համայնքի ավագանու առաջիկա նիստում, այսուհետ սահմանված կարգով գումարել նաև հանձնաժողովների նիստեր և կազմել համապատասխան |
| 3. | **Համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների իրականացման նկատմամբ ավագանու իրականացրած վերահսկողության վերաբերյալ արձանագրության առկայություն:** | Թերի է պահպանված | Չկա կոնկրետ հսկողության վերաբերյալ որևէ արձանագրություն, սակայն առկա են համայնքի ավագանու նիստերի արձանագրությունները, որոշումները, որոնք նույնպես իրականացվող հսկողության բաղադրիչ են: | Այսուհետ ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| | Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ նվողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|
| | 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 2) | տեղական տուրք և (կամ) վճար վճարողների գրանցամատյանները վարելու կարգի վերաբերյալ Ավագանու որոշման առկայություն. | Պահպանված չէ | Տեղեկություններ առկա չեն: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 9) | համայնքի ավագանին հաստատում է աղբահանության իրականացման կարգը, այդ թվում՝ աղբահանության իրականացման նվազագույն ժամանակացույցը, աղբամանների կամ կոնտեյներների տեղադրման վայրերը, դրանց տեսակները և քանակը. | Թերի է պահպանված | Չկա ժամանակացույց | Անհրաժեշտ է կազմել ժամանակացույց և ներկայացնել համայնքի ղեկավարի հաստատմանը |
| 10) | համայնքի ավագանին հաստատում է սանիտարական մաքրման սխեման, որը պարունակում է համայնքում առաջացող աղբի ծավալների մոտավոր հաշվարկը, սանիտարական մաքրման ենթակա տարածքները, սանիտարական մաքրման աշխատանքների ծավալները, աղբի հավաքման, պահման, փոխադրման, տեղադրման, տեսակավորման և վնասազերծման ձևերն ու մեթոդները, անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներին ներկայացվող պահանջները, սանիտարական մաքրման ենթակա հուշարձանների տեղակայումը: | Պահպանված չէ | Սանիտարական մաքրման սխեման բացակայում է | Անհրաժեշտ է կազմել սանիտարական մաքրման սխեման և ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը |
| 4) | համայնքի ղեկավարի ներկայացմամբ համայնքի ավագանին հաստատում է հավելավճարի կիրառման կարգը և չափը: | Պահպանված չէ | Հավելավճարի կիրառման կարգը և չափը չեն սահմանվել: Չի պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը: | Առաջարկվում է համապատասխան որոշմամբ սահմանել հավելավճարի կիրառման կարգը և չափը: |
| 9. | **Օրենքով սահմանված դեպքերում համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին ավագանու որոշման առկայություն.** | Թերի է պահպանված | Առկա է միայն Տեղ գյուղի համար: | Առաջարկվում է ապահովել դրույթի ամբողջական կատարումը |

| | Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ խիկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|
| | 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 38. | **Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու վերաբերյալ ավագանու որոշման առկայություն.** | Պահպանված չէ | Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները չեն սահմանված: Չի պահպանված <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջը: | Ապահովել անհրաժեշտ կանոնների, պայմանների ու պահանջների սահմանումը |
| 1) | համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները սահմանելու վերաբերյալ ավագանու որոշման (որոշումների) համապատասխանությունը <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի պահանջներին. | Պահպանված չէ | Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները չեն սահմանված: Չի պահպանված <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետի պահանջը: | Ապահովել անհրաժեշտ կանոնների, պայմանների ու պահանջների սահմանումը |
| 2) | սահմանում է համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները. | Պահպանված չէ | Համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառության իրականացման թույլատրելի վայրերը, պահանջները և պայմանները չեն սահմանված: Չի կատարված <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.1-րդ կետի պահանջը: | Ապահովել անհրաժեշտ կանոնների, պայմանների ու պահանջների սահմանումը |
| 3) | համայնքի ավագանին սահմանում է սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները. | Պահպանված չէ | Սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների տեղակայմանը (հեռավորությանը) ներկայացվող պահանջները չեն սահմանված: Չեն կատարված <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 41.2-րդ կետի և <<Առևտրի և ծառայությունների մասին>> ՀՀ օրենքի 15.3-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները: | Ապահովել անհրաժեշտ կանոնների, պայմանների ու պահանջների սահմանումը |
| 4) | ավագանու կանոնակարգով սահմանված կարգով անդամակցել է ավագանու որևէ մշտական հանձնաժողովի և մասնակցել դրա նիստերին. | Թերի է պահպանված | Մշտական հանձնաժողովներին ավագանու անդամների անդամակցությունը փաստված է համայնքի ավագանու համապատասխան որոշմամբ, սակայն մշտական հանձնաժողովների նիստերի մասին արձանագրություններ վարել: | Այսուհետ ապահովել մշտական հանձնաժողովների նիստերի կայացումը, դրանց պատշաճ արձանագրումը: |

ԳԼՈՒԽ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| | Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|
| | 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 2) | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով կազմում և Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհների անվանացանկում ընդգրկված ճանապարհների մաս հանդիսացող տարանցիկ ճանապարհներին վերաբերող մասով (բացառությամբ Երևան քաղաքի) լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացնում համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման (համայնքային ենթակայության ճանապարհների մասով) և կայացնում է որոշումներ՝ այդ սխեմային համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ. | Պահպանված չէ | Սխեման բացակայում է: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| ԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ | | | | |
| 0) | կազմակերպում են համայնքի բնակչության պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում. | Թերի է պահպանված | 16.10.2019թ համայնքի ղեկավարի 167-Ա որոշումով ստեղծվել է Համայնքի ԱՌԿ խորհուրդը, ԱՌԿ պլանը գտնվում է մշակման փուլում: | Մշակել համայնքի ԱՌԿ պլանը |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ | | | | |

| | Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|
| | 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 5) | գույքագրման փաստաթղթերին կցվում է համայնքի ընթացիկ քարտեզի սահմանված կարգով հաստատված պատճենը, որում արտացոլվում են սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի փոփոխությունները. | Պահպանված չէ | Չկա համապատասխան քարտեզի պատճենը: Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը. |
| 6) | ամենամյա պարտադիր գույքագրման փաստաթղթերը ներկայացվում են ավագանու հաստատմանը, ընթացիկ քարտեզի փոփոխությունները կատարվում են գույքագրման փաստաթղթերի համար սահմանված պահանջներին համապատասխան. | Պահպանված չէ | Չկա համապատասխան քարտեզի պատճենը: Չեն պահպանվել <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 77-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 7) | կազմում և վարում է համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզը (ընթացիկ քարտեզ). | Թերի է պահպանված | Ընթացիկ քաղաքաշինական քարտեզն առկա է, սակայն վարվում է թերություններով: | Առաջարկվում է ապահովել դրույթի ամբողջական կատարումը |
| 8) | նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական կադաստրը, կազմում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը և ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը. | Թերի է պահպանված | Քաղաքաշինական կադաստրը վարվում է թերություններով: | Առաջարկվում է ապահովել դրույթի ամբողջական կատարումը |
| բ. | տարածքների սանիտարական մաքրման սխեմաների կազմում, | Պահպանված չէ | Տարածքների սանիտարական մաքրման սխեմաները բացակայում են: | Առաջարկվում է ապահովել դրույթի ամբողջական կատարումը: Անհրաժեշտ է կազմել տարածքների սանիտարական մաքրման սխեմաները և ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը |
| գ. | գերեզմանատների կառուցապատման հատակագծեր (օգտագործման սխեմաներ) մշակելը և հաստատելը, | Պահպանված չէ | Սխեմաները (հատակագծերը) բացակայում են: | Անհրաժեշտ է կազմել գերեզմանատների հատակագծերը: |

| | Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|
| | 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 29) | համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը. | Թերի է պահպանված | Առկա են եղել թերություններ: | Բացառել թերությունները |
| 30) | համայնքի ղեկավարը վերահսկողություն է իրականացնում՝ հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու նկատմամբ, հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի պահպանման նկատմամբ, հողերի պահպանմանն ուղղված միջոցառումների նկատմամբ, հողերի խախտման հետ կապված աշխատանքներ կատարելիս հողի բերրի շերտի հանման, պահպանման և օգտագործման նկատմամբ. | Թերի է պահպանված | Թերի է իրականացվում <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի և ՀՀ հողային օրենսգիրք 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 31) | համայնքի ղեկավարը կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումը համայնքի վարչական սահմաններում, օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հողային օրենսդրության պահանջները խախտողների նկատմամբ կիրառում է վարչական տույժեր, ինչպես նաև իրավասու մարմիններ է ներկայացնում հաղորդումներ՝ իրավախախտում թույլ տված անձանց՝ օրենքով սահմանված պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ. | Թերի է պահպանված | Թերի են իրականացվում <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի և ՀՀ հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| | Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|---|
| | 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 35) | հողօգտագործման բնագավառում խախտումներ իրականացնելու համար վարչական իրավախախտում արձանագրելու դեպքերը. | Թերի է պահպանված | Թերի է իրականացվում <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի դրույթները | Բացառել թերությունները |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ | | | | |
| 0) | ըստ բնակության վայրի, ինչպես նաև հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար ստեղծում է համապատասխան պայմաններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով. | Թերի է պահպանված | Հսկողության ժամանակահատվածում համայնքում չեն կառուցվել նոր խաղահրապարակներ և սպորտային հրապարակներ. սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմաններ համայնքում ստեղծված չեն: | Միջոցներ ձեռնարկել նմանատիպ պայմաններ ապահովելու ուղղությամբ |
| ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ | | | | |
| 2) | Հայաստանի Հանրապետության պետական իշխանության և կառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կարգի գործատուները հաշմանդամների համար ապահովում են սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտների, բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և կառույցների մատչելիության, հասարակական տրանսպորտից և տրանսպորտային հաղորդակցության, կապի և տեղեկատվության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել կերպով օգտվելու պայմանների ստեղծումը. | Թերի է պահպանված | Համայնքի վարչական տարածքում գործող ոչ բոլոր սոցիալական ենթակառուցվածքի օբյեկտները, բնակելի, հասարակական, արտադրական շենքերը և կառույցներն են մատչելի հաշմանդամների համար: | Միջոցներ ձեռնարկել նմանատիպ օբյեկտներում հաշմանդամների համար մատչելիությունն ապահովելու ուղղությամբ: |
| Քաղաքաշինություն | | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 1.01. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված համայնքի գլխավոր հատակագծի առկայություն | Չի պահպանված | Համայնքը չունի գլխավոր հատակագիծ: Ներկա պահին ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 1.02. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի առկայություն | Չի պահպանված | գոտևորման նախագիծ: Ներկա պահին ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Տեղին: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 1.03. Գլխավոր հատակագիծը մշակվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համաձայնեցված և հաստատված նախագծային առաջադրանքի հիման վրա | Չի պահպանված | Ներկա պահին ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի 8 խոշորացված համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակումը, որը վերաբերում է նաև Տեղին: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 2.01. Համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում արտացոլված են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված հողամասերը (նպատակային կամ գործառնական փոփոխության մասին նշումով), նախագծման և շինարարության թույլտվությունները, ինչպես նաև գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի փոփոխությունները: | Թերի է պահպանված | Թերի են պահպանված "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջները: | Առաջարկվում է պահպանել տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի պահանջները |
| 3.01. Համայնքի տարածքում ընդգրկված քաղաքաշինական գործունեության օբյեկտների՝ անշարժ գույքի միավորների, գործառական տարածքների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների և բնակավայրերի քաղաքաշինական անձնագրերը | Թերի է պահպանված | Թերի են պահպանված ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի N 802 որոշման 8,9,13 կետերի պահանջները: | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 1999 թվականի դեկտեմբերի 31-ի N 802 որոշման 8,9,13 կետերի պահանջները |
| 3.09. Համայնքի գոտևորման նախագծի կազմում կամ առանձին փաստաթղթի տեսքով մշակված է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը | Չի պահպանված | Համայնքը չունի գոտիավորման նախագիծ, չունի քաղաքաշինական կանոնադրություն /ՀՀ կառավարության 2001թ. մայիսի 14-ին N 408 որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ բնակավայրի գոտևորման նախագիծը և բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 3.10. Քաղաքաշինական կանոնադրության դրույթները չեն հակասում հաստատված ծրագրային փաստաթղթերի դրույթներին, ներառյալ են բնակավայրում պատմականորեն ձևավորված ճարտարապետական ոճին | Չի պահպանված | Համայնքը չունի քաղաքաշինական կանոնադրություն: ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ՔԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 3.11. Համայնքում իրականացվող նոր կառուցապատումը համահունչ է համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված դրույթներին | Չի պահպանված | Համայնքը չունի քաղաքաշինական կանոնադրություն: ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշման համաձայն ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018 թվականին սկսել է ՀՀ Սյունիքի մարզի խոշորացված 8 համայնքների համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 4.01. Ճարտարապետահատակագծային առաջադրանքը/ները (ՃՀԱ) տրամադրվում են համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի դրույթներին համապատասխան | Չի պահպանված | Համայնքը չունի գլխավոր հատակագիծ, չունի գոտիավորման նախագիծ: Համաձայն ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 29-րդ կետի պահանջների | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 6.05. Շինարարության թույլտվությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում /2 տարի/ ավարտվում են շինարարական աշխատանքները կամ կառուցապատողը սահմանված կարգով դիմում է աշխատանքների ավարտի համար նոր ժամկետ սահմանելու համար | Թերի է պահպանված | շին. թույլ N 8 12,11,2018թ - շին. թույլ N 9 12,11,2018թ շին. թույլ N 10 12,11,2018թ, շին. թույլ N 1 09,09,2019թ շինարարության տևողությունները ավարտվել է, չկա ավարտական ակտ, կամ շին. թույլտվությունները համայքի կողմից չեն երկարացվել: Խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 123-124- կետերի պահանջները | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 6.08. ՀՀ օրենսդրությամբ սահմանված 3-օրյա ժամկետում թույլտվության պատճենները ներկայացվում են ՀՀ ՔՆ քաղաքաշինական պետական տեսչություն և ՀՀ ԿԱ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն | Թերի է պահպանված | շին. թույլ N 1 09,09,2019թ, մասով Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները |
| 6.09. 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման) թույլտվություն տրամադրելու վերաբերյալ իրազեկվում է ՀՀ համապատասխան մարզպետը | Թերի է պահպանված | շին. թույլ N 1 09,09,2019թ, մասով Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ ստուգման ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 8.01. Համայնքում ինքնակամ շինարարության դեպքերը կասեցված են | Թերի է պահպանված | Ստուգման ընթացքում հայտնաբերվել է մեկ ինքնակամ կառույց Ստուգվող ժամանակահատվածում համայնքի տարածքում համայնքապետարանի կողմից հայտնաբերվել և կասեցվել է 6 ինքնակամ շինության դեպք, համաձայն տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի | Առաջարկվում է պահպանել տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1 կետի 8-րդ ենթակետի պահանջները՝ կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը. |
| 10.02. Հուղարկավորությունների հետ կապված մատուցվող վճարովի և անվճար ծառայությունների ցանկի հաստատումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N 1, կետ 12, 13) | Չի պահպանված | Ցանկեր չեն սահմանված: | Սահմանել ցանկերը, ներկայացնել ավագանու հաստատմանը |
| 10.05. Յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար գերեզմանատների հողերի օգտագործման հատակագծերի մշակում և հաստատում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 10) | Չի պահպանված | գերեզմանատների հատակագծերը բացակայում են | Ապահովել գերեզմանատների հատակագծերի կազմումը և հաստատումը |
| 10.06. Գերեզմանատներում տրամադրվող գերեզմանների չափերի պահպանում (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 11, 12) | Թերի է պահպանված | Հաճախ տրամադրվում են առանց սահմանված չափերի պահպանման: | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| 10.07. Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15, 16) | Թերի է պահպանված | Գերեզմանատները մաքրվում են, սակայն բացակայում են ցուցանակները: | Տեղադրել անհրաժեշտ նյութերը: |

| Նախատված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 10.09. Վճարովի հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքների սահմանումը՝ ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակիցների (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N 7, կետ 8) | Չի պահպանված | Վճարովի հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքներ չեն սահմանված: | անհրաժեշտ է սահմանել արժեքներ և հաստատել ավագանու որոշմամբ |
| Հողօգտագործում | | | |
| 13. Հողամասերի աճուրդի կազմակերպման փաթեթում ներառվում են օրենքով և սույն կարգով սահմանված՝ անհրաժեշտ հետևյալ փաստաթղթերը՝<br>1) օտարման պայմանագրի նախագիծը.<br>2) օտարվող հողամասի հատակագծի նախագիծը.<br>3) քաղաքաշինական գործունեության համար նախատեսվող հողամասերի համար սահմանված կարգով կազմված ճարտարապետահատակագծային առաջադրանքի նախագիծը՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված քաղաքաշինական, բնապահպանական և այլ բնույթի պահանջների և սահմանափակումների, ելակետային տվյալների ու տեխնիկական պայմանների ամրագրմամբ, այդ թվում՝ հողամասի նկարագրությունը (կողմնորոշումը, թեքությունը, բարեկարգման վիճակը, հաղորդակցուղիների և իրացման ենթակա կառույցների առկայությունը), շինարարության սկզբի և ավարտի ժամկետները: | Թերի է պահպանված | Խախտվել են ՀՀ կառավարության 12.04.2001թ. N286 որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի դրույթները | Բացառել խախտումները: |
| 38. Հողամասերի վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման համար կազմվում է հողաշինարարական գործ, որում ներառվում են մրցույթի պայմաններով նախատեսված փաստաթղթերը: | Թերի է պահպանված | Խախտվել են ՀՀ կառավարության 12.04.2001թ. N286 որոշմամբ հաստատված կարգի 50-53-րդ կետի դրույթները | Բացառել խախտումները: |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 41. Յուրաքանչյուր տարվա հողային հաշվեկշռում արտացոլվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կատարված հետևյալ փոփոխությունները՝<br>1) հողի սեփականության ձևի,<br>2) հողի օգտագործման ձևի,<br>3) հողի նպատակային նշանակության,<br>4) հողատեսքերի և դրանց գործառնական նշանակության,<br>5) հողերի իրացման, բարելավման, հողատեսքերի, բազմամյա տնկարկների հիմնման և քանդման,<br>6) [illegible] | Թերի է պահպանված | Խախտվել են ՀՀ կառավարության 23.10.2000թ. N656 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 5-րդ կետերի դրույթները | Բացառել խախտումները: |
| 43. Համայնքի ղեկավարը կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը, այն համաձայնեցնում է համայնքի ավագանու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանման (Երևանի քաղաքապետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի) հետ: | Թերի է պահպանված | Խախտվել է ՀՀ կառավարության 23.10.2000թ. N656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի դրույթները | Բացառել խախտումները: |
| 45. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը հաստատվելուց հետո համայնքների ղեկավարները և մարզպետները Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հողերի հաշվառման համապատասխան գրքերում լրացնում են հաստատված տվյալները: | Չի պահպանված | Խախտվել են ՀՀ կառավարության 23.10.2000թ. N656 որոշմամբ հաստատված կարգի 12-րդ կետի դրույթները | Բացառել խախտումները: |
| Առևտուր և ծառայություններ | | | |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, առևտրի և ծառայությունների ոլորտում այդ օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը, բացառությամբ նույն օրենքով սահմանված առանձին դեպքերի, իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները: Հսկողությունն իրականացվում է օրենքի 17-րդ հոդվածով սահմանված կարգով: | Չի պահպանված | Չի պահպանված առևտրի և ծառայությունների ոլորտի 01-03, 05, 06, 10, 14-16, 20, 27, 29-34 դրույթների մասով:: Խախտվել են «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի և առանձին այլ հոդվածների պահանջները: Չկան առևտրի օբյեկտներում հսկողության իրականացումը փաստող արձանագրություններ, տեղեկանքներ և այլ փաստաթղթեր: | Այսուհետ ապահովել դրույթի ամբողջական կատարումը:Կազմել հսկողության մասին հավաստող համապատասխան փաստաթղթերը: |
| **Արտակարգ իրավիճակներ** | | | |
| 4.01. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն: | Չի պահպանված | Հայտերը չեն ներկայացված: | Առաջարկվում է ներկայացնել սահմանված հայտերը: |
| 4.02. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում: | Չի պահպանված | Համայնքի զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ չեն ներառված: | Սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումները ներառել զարգացման ծրագրերում: |
| **Առողջապահություն** | | | |
| 1.01. Ապահովված է սպառման թափոնների հեռացման ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաճախականությունը՝ առնվազն երեք օրը մեկ անգամ, | Թերի է պահպանված | Աղբահանությունն իրականացվում է շաբաթական մեկ անգամ սխեման և ժամանակացույցը առկա են | Հնարավորություն ստեղծել սահմանված հաճախականությամբ աղբահանություն կազմակերպելու համար |
| 1.02. $+5^{0}C$ և ավելի բարձր օդի ջերմաստիճանի դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ամեն օր հաճախականությունը: | Պահպանված չէ | Աղբահանությունն իրականացվում է շաբաթական մեկ անգամ սխեման և ժամանակացույցը առկա են | Հնարավորություն ստեղծել սահմանված հաճախականությամբ աղբահանություն կազմակերպելու համար |

| Խախտված դրույթի անվանումը | Թերի է կամ Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ |
|---|---|---|---|
| 1 | 2,3,4 | 5 | 6 |
| 3.02. Ջրամատակարարման բաշխիչ ցանցերում առկա է խմելու ջրի արտադրական հսկողության իրականացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված (մանրէաբանական զգայորոշական ցուցանիշներով սահմանված հաճախականությամբ): | Թերի է պահպանված | Արտադրական հսկողությունն իրականացվում է միայն կենտրոնացված ջրամատակարարում ունեցող բնակավայրերում | Հսկողության տակ առնել ջրի մոնիտորինգի ՀՎԿԱԿ – ի կողմից ներկայացվող տվյալները և արձագանքել թերությունների հայտնաբերման դեպքում |
| 3.03. Մինչև ջուրը բաշխիչ ցանց մղելը առկա է խմելու ջրի մնացորդային քլորի պարունակության հսկողության իրականացում: | Թերի է պահպանված | Արտադրական հսկողությունն իրականացվում է միայն կենտրոնացված ջրամատակարարում ունեցող բնակավայրերում | Ապահովել դրույթի ամբողջական կատարումը: |
| **Կրթություն** | | | |
| 04. Նախադպրոցական հաստատության ղեկավար աշխատողների ընտրության, նշանակման և պաշտոնից ազատման ապահովում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին համապատասխան: | Չի պահպանված | Նախադպրոցական հաստատության ղեկավար աշխատողների ընտրությունն ու նշանակումը կատարվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշների չպահպանմամբ: Տեղ գյուղի N1 և N2 ՀՈԱԿ-ների տնօրենները չունեն բարձրագույն կրթություն:: | Վերացնել խախտումը: |

Վերոնշյալ բոլոր դրույթների մասով հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով առաջարկվում է 20 աշխատանքային օրվա ընթացքում սկսել միջոցներ ձեռնարկել այդ խախտումները վերացնելու ուղղությամբ:

Սույն հավելվածը կազմված է 2 օրինակից:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս. Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի ղեկավար՝**

**Ն. Ծատուրյան**